

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
2015-2016 ուստարի 10-11 դասարան

I Լրացնել բաց թողնված բառերը /յուրաքանչյուր հարց գնահատվում է 0.1 միավոր-0.5միավոր/:

- 1.1. Բջջում մակրոտարր են համարվում _____:
- 1.2. Ջրի մոլեկուլն ընդունակ է առաջացնել ----- կապեր:
- 1.3. Յուրաքանչյուր բջիջ առաջանում է էլակետային բջջից _____ միջոցով:
- 1.4. Արտաքին բջջաթաղանթի տակ գտնվում է -----:
- 1.5. Սպիտակուցներն ընդունակ են փոխելու իրենց բնորոշ կառուցվածքը, դա կոչվում է _____:

II Գտեք ճիշտ պատասխանն պարունակող տողերը / յուրաքանչյուր հարց գնահատվում է 0.1 միավոր-0.5 միավոր/.

1. Ակտին և միոզին սպիտակուցները իրականացնում են թարթիչների և մկանների շարժումները:
2. Լիզոսոմի ներսում գտնվում են մարսողական ֆերմենտներ:
3. Բոլոր սպիտակուցները լուծվում են ջրում:
4. Ճարպերն ունեն սննդանյութերի պաշարման, կառուցողական, էներգետիկ, ջերմակարգավորման գործառույթներ:
5. Բուսական բջջին բնորոշ են պլաստիդների և խոշոր վակուոլի առկայությունը:

Պատասխան _____

III Լրացնել գծապատկերը՝ նշելով ԴՆԹ-ի և ՌՆԹ-ի առանձնահատկությունները / գնահատվում է 0.4 միավոր/:

ԴՆԹ	ՌՆԹ
1.	1.
2.	2.
3.	3.
4.	4.

IV Գտնել ճիշտ համապատասխանությունը (յուրաքանչյուր ճիշտ քայլը գնահատվում է 0.05 միավոր-0.25 միավոր):

Բջջի օրգանական նյութերը	Բնորոշում
1.Սպիտակուցներ 2.Լիպիդներ 3.Ածխաջրեր	Ա- նրանց վերափոխման արդյունքում կարող է առաջանալ մեծ քանակությամբ ջուր Բ-բջջային թաղանթների կառուցվածքային հիմքն են Գ- Կազմված են ածխածնից և ջրից: Դ- առանձնահատկությունները որոշվում են առաջնային կառուցվածքով: Ե-շատ կան բուսական բջջում:

Պատասխան _____

Այս մասում ոչինչ չգրել

V Գտնել ճիշտ համապատասխանությունը երկու այունակների միջև/ յուրաքանչյուր ճիշտ քայլը գնահատվում է 0.1 միավոր - 0.6 միավոր/:

1. մեկ ծնողական առանձնյակից ստացված գենետիկորեն միակերպ սերունդ	Ա. շիզոֆրենիա
2. մալարիայի պլազմոդիումին բնորոշ կիսումը	Բ. կլոն
3. Չվարանի կեղևային շերտում գտնվող բշտեր	Գ. զիզոտ
4. Առաջանում է երկու հապլոիդ գամետների միաձուլումից	Դ. ֆոլիկուլ
5. Քրոմոսոմների միացման գործընթացը մեյոզի առաջին պրոֆազի ժամանակ	Ե. կրոսինգովեր
6. Հոմոլոգ քրոմոսոմների միջև տեղի ունենում հոմոլոգ մասերի փոխանակում:	Զ. կոնյուգացիա

Պատասխան _____

VI Լրացնել գծապատկերը /գնահատվում է 0.35 միավոր/:

Թվարկել Էկտոդերմից զարգացող օրգանները	Թվարկել Էնտոդերմից զարգացող օրգանները
1.	1.
2.	2.
3.	3.

VII. Նկարագրել և գծապատկերել ԴՆԹ-ի մոլեկուլի կառուցվածքը /գնատվում է 0.3 միավոր/:

VIII Գծապատկերել սպիտակուցի կառուցվածքային մակարդակները՝ նշելով կապերի բնույթը /գնատվում է 0.3 միավոր/:

IX Պատասխանել հարցին / գնատվում է 0,3 միավոր/:

Ո՞րն է սեռական բազմացման առավելությունը անսեռ բազմացման նկատմամբ: Անսեռ բազմացման ի՞նչ եղանակներ գիտեք: Բերեք օրինակներ

X Լուծել խնդիր (ճիշտ պատասխանը 0.5 միավոր)

Գտնել 31200 ա.մ. մոլեկուլային զանգված ունեցող սպիտակուցի սինթեզը պայմանավորող գենի նուկլեոտիդների թիվը, եթե մեկ ամինաթթվի միջին մոլեկուլային զանգվածը 120 ա.մ. է: